ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

24 դեկտեմբերի երեքշաբթի 2024
տպագրության ԺԴ տարի

180
(3030)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՔՊ-Ն ՈՂՋ ՌԵՍՈՒՐՍԸ ԳՈՐԾԻ ԿԴՆԻ

ՔՊ-ականները լծվել են Գյումրու արտահերթ ընտրություններում հաղթանակ ապահովելու գործին:

Գյումրիում ավագանու արտահերթ ընտրությունները, ըստ սահմանված ժամկետների, կանցկացվեն մարտի 30-ին:

Իշխանականները դեկտեմբերի 8-10-ն անցկացված primaries-ից (ներկուսակցական ընտրություններ) հետո անցել են իրենց օգտին ձայներ հավաքելու «սուրբ» գործին: ՔՊ-ական պատգամավորները եւ տեղի ակտիվը պարբերաբար հանդիպումներ են ունենում գյումրեցիների հետ, նրանց խնդիրներով հետաքրքրվում ու փորձում են, ձայն կորզելու նպատակով, սիրաշահել նրանց:

Ավելին՝ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Նիկոլ Փաշինյանն իր թիմակիցներին ասել է, որ Գյումրիում հաղթելը կենաց-մահու խնդիր է, ու յուրաքանչյուր ոք պետք է իր ներդրումն ունենա հաղթանակի գործում:

Իշխանականներից ոմանք ակնարկել են, որ Գյումրիում իրենց վարկանիշը ցածր է, ինչը ապացուցեց նաեւ նախնական ընտրություններում անկուսակցական, ՔՊ-ի հետ կապ չունեցող Սարիկ Մինասյանի հաղթանակը, սակայն հրահանգվել է ողջ ռեսուրսը գործի դնել:

ՔՊ-ում հույսը դրել են Սարիկ Մինասյանի վրա, որը վերջերս ՔՊ-ին անդամակցելու դիմում է գրել եւ համայնքապետի ընտրությունների ժամանակ էլ գլխավորելու է ցուցակը:

«Էյր Արաբիա»-ն փորձեց համագործակցել Հայաստանի հեղափոխական Կառավարության հետ. վճարեց 10 միլիարդ դրամ եւ ընկավ դատարանի դռները: ԱՆԻՖ-ի՝ «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի ամենամեծ նախագծերից մեկը՝ «Ֆլայ Արնան», պիտի լիներ հեղափոխություն հայկական ավիացիոն ոլորտում: Սակայն գործընթացն ավարտվեց բացասական նոտայի վրա. ծրագիրը կյանքի չկոչվեց, իսկ «Էյր Արաբիա»-ն դատի տվեց ՀՀ Կառավարությանը: Բանն այն է, որ երբ «Էյր Արաբիա»-ն իր ցանկում ավելացնում է եւս մեկ ուղղություն, այն պետք է համապատասխանի որոշակի ներքին կանոնադրական կետերի. դրանք են պարենային ապահովվածությունը, անվտանգության երաշխիքները, Երկրի վրա դիրքը, ռելիեֆը եւ այլ կետեր: ԱՆԻՖ-ի, այսինքն՝ Հայաստանի եւ «Էյր Արաբիայի» բանակցությունների ժամանակ Նիկոլ Փաշինյանը, փաստացի, բանավոր տվել է բոլոր երաշխիքները «Էյր Արաբիայի» ներկայացուցիչներին, հարմարվել է բոլոր կետերի հետ, անգամ անվտանգության երաշխիքներ է տվել՝ միայն թե սկսվի համագործակցությունը: «Էյր Արաբիա»-ն, հավատալով ՀՀ Կառավարության ազնվությանը, ներդրել է 10 մլրդ դրամ, 10 մլրդ դրամ էլ Հայաստանն է ներդրել. ընդհանուր ներդրվել է 20 մլրդ դրամ, իսկ ծրագիրը տապալել են: Մարտի 20-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը Ազգային ժողովում Կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ հայտարարեց, թե պետական մասնակցությամբ ավիաընկերության ծրագիրը ձախողվել է: Ըստ նրա՝ ավիաընկերության հիմնադրումից հետո շուկայի կոնյուկտուրան որոշակի փոփոխություն էր կրել, նոր ընկերություններ էին հայտնվել, եւ Fly Arna-ն մրցակցությանը չէր դիմացել: ԱՆԻՖ-ի ձախողումների մասին Ազգային ժողովի ամբիոնից «Հայաստան» խմբակցության պատգամավոր Աննա Գրիգորյանը եւ վարչապետ Նիկոլ Փաշինյանին, եւ ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանին կոնկրետ հարցադրումներ էր արել, թե ինչպես է տապալվել ծրագիրը, եւ ինչի մասին այն կարող է վկայել:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Այսօր Երեւանի ավագանին կավարտի աշխատանքը: Տարեվերջյան այսօրվա նիստում քննարկվելու են համայնքի 2025 թվականի բյուջեն եւ զարգացման ծրագիրը: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ավագանու ընդդիմադիր՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության քարտուղար Իգաբելլա Աբգարյանը նշում է՝ անընդունելի են համարում, որ համայնքի զարգացման ծրագիրը չզեկուցվող ֆորմատով է այսօր քննարկվելու: Նրա խոսքով՝ նիստի ժամանակ պահանջելու են բաց ֆորմատով քննարկել հարցը: Երեւանի ավագանու նիստում կառաջարկվի նաեւ նոր նախագիծ, որով մինչեւ 2025 թվականի փետրվարի 1-ը նոր փաթեթների հետ միաժամանակ կպահպանվի մեկ երթեւեկության համար նախատեսված 100 դրամանոց արժեքը՝ բացառապես էլեկտրոնային եղանակով՝ Tellcell Wallet-ով, վճարային տերմինալներով ձեռք բերված թղթային QR տոմսերով, ինչպես նաեւ բանկային քարտերով:

ՀՀ արդարադատության նախարարության ենթակայության տակ գտնվող 3 կարեւոր կառույց այս պահին առանց ղեկավարի է: Մասնավորապես՝ պրոբացիոն ծառայության, քրեակատարողական ծառայության եւ հարկադիր կատարման ծառայության պետերի պաշտոնները: «Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը ներքին կարգով ասել է, որ մինչեւ այդ ոլորտը համակարգող տեղակալ չնշանակի, տվյալ ոլորտում պետ չի նշանակելու: Այս տեղեկությունը փորձեցինք պարզել արդարադատության նախարարությունից, որտեղից ի պատասխան՝ արդարադատության նախարարի մամուլի քարտուղար Ծովինար Խաչատրյանը հայտնեց. «Նման խոսակցությունները իրականությանը չեն համապատասխանում, ու նախարարը նման բան երբեւէ չի ասել»:

ԶՐՈՒՅՑ

«ԻՄ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵԹԵ ՆԱՅԵՔ, ԿՀԱՍԿԱՆԱՔ՝ ՊԱՐԱՊ ՉԵՄ ՄՆԱԼՈՒ»

Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Հովհաննես Հարությունյանը, որը դեկտեմբերի 20-ին հայտարարեց, որ հրաժարական է ներկայացրել, «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նշում է՝ պարապ չի մնալու, նոր պաշտոնի է հավակնում:

-Պարոն Հարությունյան, Դուք վերջերս հայտնեցիք, որ լքում եք ՏԿԵ փոխնախարարի պաշտոնը: Տպավորություն է, որ Դուք շրջապտույտի մեջ եք, քանի որ տարբեր տարիների տարբեր պաշտոններ եք զբաղեցրել՝ առողջապահության նախարարի խորհրդական, հետո՝ տեղակալ, Շիրակի մարզպետ: Ի՞նչն է պատճառը:

-Իմ գրառումը, եթե չեք տեսել, արժե այն կարդալ, այնտեղ բոլոր տեսակի հնարավոր հարցադրումներին պատասխանել եմ:

-Խնդիրն այն է, որ այդ բոլոր պաշտոնները կարճ ժամանակահատվածով եք զբաղեցրել, հետո հեռացվել եք ու այլ տեղ տեղափոխվել: Ի՞նչն է պատճառը, լավ չե՞ք կատարում աշխատանքը, տարաձայնությունն՞ր են լինում:

-Դե ում համար կարճ, ում համար երկար: Ես արդեն ասացի, որ գրառման մեջ պատասխաններ տվել եմ, իսկ եթե դա բավարար չէ, ձեր ճաշակի հարցն է:

-Ի դեպ, նկատեցինք, որ ՔՊ նիստին մասնակցության հենց հաջորդ օրը Ձեզ հեռացրին. ինչի՞ց են դժգոհել, ի՞նչ են ասել Ձեզ նիստի ժամանակ:

-Այդ օրվա նիստի վերաբերյալ վարչապետի գրառման տակ գրված է. ես գրեթե բոլոր նիստերին ներկա եմ եղել:

-Մեր տեղեկություններով՝ Ձեզ ուղղված հիմնական մեղադրանքը խոշոր հանքերի աշխատանքը տապալելն է եղել: Ովքե՞ր են դժգոհություններ հայտնել:

-Ոլորտի վերաբերյալ գոյություն ունի կարծիքների ձեւավորման ինստիտուտ, որը բաղկացած է իշխանական տարբեր մարմիններից, քաղհասարակությունից, կամ դրա մասին կարող են խոսել վիճակագրական տվյալները: 2023 թվականին կառավարության որոշմամբ ընդունվել է հանքարդյունաբերության ռազմավարությունը, որի մշակման մեջ ես անմիջական ամենօրյա աշխատանք եմ ունեցել, եթե կառավարությունը հավանություն է տալիս եւ փաստաթղթի տեսքով այն ընդունում է պարտադիր կատարման, դա չի նշանակում, որ ոլորտից կա դժգոհություն:

-Դե ծրագիր կազմելն ուրիշ բան է, այն իրացնելը՝ ուրիշ: Ծրագիրը կազմել են, բայց այն տապալել եք, դրա համար էլ Ձեզ հեռացրել են:

-Դրա իրականացումն էլ հրապարակային պրոցես է, որի վերաբերյալ կա հաշվետվողականություն, որը թափանցիկ է եւ ռազմավարությամբ, գործողությունների պլանով, նախատեսված աշխատանքով իրականացվում է: Ես քաղաքական պաշտոն զբաղեցնող մարդ եմ եղել, ով կոնկրետ քաղաքականություն է մշակել ոլորտի համար, կառավարության գնահատականը իմ կողմից մշակված ծրագրին հավանություն տալն է:

-Ձեզ աշխատանքից հեռացնելն է նաեւ գնահատական:

-Ինձ հեռացնել-չհեռացնելու խնդիր ե՞րբ եք տեսել, ի՞նչ գիտեք իմ ծրագրերի մասին:

-Նոր պաշտոնի՞ եք անցնելու:

-Իմ կենսագրությունը եթե նայեք, կհասկանաք՝ ես պարապ չեմ մնալու:

-Իսկ ի՞նչ պաշտոնի եք հավակնում:

-Դրա մասին հիմա հրապարակային խոսելու ցանկություն չունեմ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՔԱՂԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ ԵՆ ՓՈՐՁՈՒՄ ՄՇԱԿԵԼ

ԱՎԻՆՅԱՆԸ՝ ԵՐԵՎԱՆԻ ՕԴԻ ՈՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երեւանի քաղաքապետարանի գործակարգավարական խորհրդակցության ժամանակ անդրադարձ եղավ Երեւանում օդի որակի հետ կապված խնդրին:

Խորհրդակցության ընթացքում Երեւանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության պետի պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանն ասաց, որ համաձայն օդի որակի ինդեքսի՝ արժեքները 6 խմբի են բաժանվում՝ լավ, չափավոր, անառողջ զգալի խմբերի համար, անառողջ, շատ անառողջ, վտանգավոր: Նա տեղեկացրեց, որ Երեւանում տեղադրված օդի մոնիթորինգի 151 կայաններից ստացված տվյալներով՝ օդի որակի ինդեքսի միջինացված արժեքը նոյեմբերին եղել է 103, իսկ դեկտեմբերին՝ 140: Այդ արժեքները գտնվում են զգայուն խմբերի համար անառողջ, այսինքն՝ 100-150 միջակայքում:

«Տեղեկացնեմ, որ Հայաստանի շրջակա միջավայրի նախարարության հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոն ՊՈԱԿ-ի կողմից իրականացված դիտարկումների համաձայն՝ օդում չտարբերակված փոշու քանակությունները նոյեմբերին սահմանային թույլատրելի արժեքները գերազանցել են առավելագույնը 1.8 անգամ, իսկ դեկտեմբերին՝3.4 անգամ: Համաձայն մթնոլորտի գերաղտոտվածության վերաբերյալ կառավարության որոշման՝ օդի վտանգավոր աղտոտվածություն է համարվում վնասակար նյութերով մթնոլորտի աղտոտումը այդ նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի 20-29 անգամ գերազանցումը երկու օրից ավելի, որի դեպքում հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոնի կողմից իրականացվում են բնակչության ազդարարման եւ ինչ-որ գործողությունների ձեռնարկման միջոցառումներ»,-ասաց Հայկազյանը:

Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը նշեց, որ Երեւանի քաղաքապետարանի ջանքերի շնորհիվ Երեւանում տեղադրվել են 151 տվիչներ օդի որակի վերաբերյալ: «Այս սարքերը տեղադրվել են հիմնականում 2024 թվականին: Կապված սեզոնից՝ օդի որակը Երեւանում էականորեն տարբերվում է: Մենք նույն այս սարքերով տեսել ենք, որ գարնանը, ամռանը աշնանը օդի որակը իրապես շատ լավ մակարդակում է գտնվում, բայց ձմեռային սեզոնին խնդիրներ են արձանագրվել են»,- ասաց Ավինյանը՝նշելով, որ այս խնդիրները նոր չեն առաջացել, պարզապես նախկինում Երեւանում այսչափ տվիչ սարքեր տեղադրված չէին, որպեսզի հնարավոր լիներ այդ խնդիրներն արձանագրել:

«Մենք արդեն հասկացել ենք, թե ինչ խնդիրներ ունենք, մեր հաջորդ քայլը պետք է լինի օդի որակի նկատմամբ իրականացվելիք քառամյա ծրագիր կազմելը: Շատ քաղաքներ այս պրոցեսի միջով անցել են: Երեւանը աշխարհագրորեն ոչ շատ բարենպաստ դիրքում է գտնվում օդի որակի տեսանկյունից, եւ մենք հավելյալ ջանքեր պետք է գործադրենք: Մի կողմ դրած մարդածին գործոնները՝ մեր աշխարհագրական դիրքը օդի որակի տեսանկյունից ոչ այնքան բարենպաստ է, մասնավորապես ձմեռային սեզոնին: Մենք նվազագույնը մարդածին հատվածին վերաբերվող գործողությունների հստակ ծրագիր պետք է ունենանք: Քայլերը լինելու են ռադիկալ, ոչ այնքան հաճելի եւ պոպուլյար, բայց մեր առողջությունը որեւէ մի հին ավտոմեքենայի շահագործումից կամ որեւէ հանքից ավելի կարեւոր է»,- եզրափակեց քաղաքապետը:

ԻՆՉ Է ՔՆՆԱՐԿՎԵԼ ՏԿԵՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ՀՀ ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանը երեկ գործակարգավարական խորհրդակցություն է անցկացրել աշխատակազմի հետ:

Նախարարը նախ շնորհակալություն է հայտնել Վաչե Տերտերյանին եւ Հովհաննես Հարությունյանին այս տարիներին կատարած աշխատանքի, ներդրած ավանդի, փորձի ու գիտելիքների համար եւ հաջողություններ է մաղթել նրանց հետագա աշխատանքում:

Այնուհետեւ քննարկվել են առաջիկա հրատապ անելիքները:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆ ԱՃԵԼ Է

ԵԱՏՄ-ում շինարարական աշխատանքների ծավալն ավելացել է 3,1%-ով, Հայաստանում ցուցանիշը կազմել է 3,3%: Այս մասին հայտնում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովը:

Աճ է նկատվում բոլոր երկրներում, բայց ամենաբարձր ցուցանիշը Ղրղզստանում է՝31,3%:

Ղրղզստանին հաջորդում են Ղազախստանը՝ 10,2%, Բելառուսը՝ 7,8%, Ռուսաստանը՝2,2%:

ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԸ ՄԻ ՇԱՐՔ ՕՐԵՆՔՆԵՐ Է ՍՏՈՐԱԳՐԵԼ

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը դեկտեմբերի 20-ին ստորագրել է «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքը եւ «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին, «Հրդեհային անվտանգության մասին» օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին օրենքների փաթեթը:

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԱՂԱԶԱՐՅԱՆԻ ԿՆՈՋ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏԸ

Մասիսի Alla Luce սգո սրահում տեղի էր ունեցել ԱԺ պատգամավոր Հովիկ Աղազարյանի կնոջ հոգեհանգիստը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հոգեհանգստին ներկա են եղել ՔՊ խմբակցության պատգամավորներ Անդրանիկ Քոչարյանը, Արմեն Խաչատրյանը, Լուսինե Բաղալյանը, Գագիկ Մելքոնյանը, Բաբկեն Թունյանը, Հակոբ Ասլանյանը, արդեն նախկին պատգամավոր Նարեկ Ջեյնալյանը:

Նիկոլ Փաշինյանը եւ ՔՊ «վերնախավից» ոչ ոք չեն մասնակցել հոգեհանգստի արարողությանը:

Հիշեցնենք, որ Հովիկ Աղազարյամի կինը մահացել էր ուրբաթ օրը՝ սրտի վիրահատությունից հետո:

«ԱՄՆ-ՈՒՄ ԿԼԻՆԵՆ ՄԻԱՅՆ ԱՐԱԿԱՆ ԵՎ ԻԳԱԿԱՆ ՍԵՌԵՐ». ԹՐԱՄՓ

ԱՄՆ նորընտիր նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ իր վարչակազմը կպահպանի գենդերային քաղաքականությունը, որտեղ կան միայն արական եւ իգական սեռեր:

«Թրամփի վարչակազմի օրոք Միացյալ Նահանգների կառավարության պաշտոնական քաղաքականությունը կլինի այն, որ գոյություն ունեն միայն երկու սեռ՝ արական եւ իգական: Այդքան բարդ չի հնչում, այնպես չէ՞», - ասել է Թրամփը՝ Արիզոնա նահանգի Ֆենիքս քաղաքում կայացած AmericaFest համաժողովում:

ԼՈՒԿԱՇԵՆԿՈՆ ԿՐԿԻՆ ԳՐԱՆՑՎԵԼ Է ՈՐՊԵՍ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒ

Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն գրանցվել է որպես պետության ղեկավարի թեկնածու հաջորդ ընտրություններում, որոնք կկայանան 2025 թվականի հունվարի 26-ին: Այս որոշումը կայացվել է հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) նիստում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալներով՝ Լուկաշենկոյի՝ որպես նախագահի թեկնածու առաջադրվելու օգտին վավեր է ճանաչվել 2 միլիոն 518 հազար 145 ընտրողի ստորագրություն: Լուկաշենկոն բելառուսական պետության ղեկավարի պաշտոնի համար կպայքարի յոթերորդ անգամ: 2020-ի նախորդ ընտրություններում նա ստացել էր ժողովրդի քվեների 80,1%-ը:

ԱՍԱԴԻ ԿԻՆԸ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՑ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

Սիրիայի նախկին նախագահ Բաշար ալ-Ասադի կինը՝Ասման, ամուսնալուծության հայց է ներկայացրել՝ դժգոհելով մոսկովյան կյանքից: Այս մասին գրում է The Jerusalem Post-ը: Լրագրողների տեղեկություններով՝ քաղաքական գործչի կինը դիմել է ռուսական դատարան եւ հատուկ թույլտվություն է խնդրել Մոսկվայից հեռանալու համար: Այժմ իշխանությունները քննարկում են նրա դիմումը:

ՍՊԱՌՆԱԼԻՔ

Եթե Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին որոշի երկրում նոր խորհրդարանական ընտրություններ նշանակել, որոնց համար իրավական հիմքեր չկան, դա նրա համար քրեական պատասխանատվություն կառաջացնի: Այս մասին ճեպազրույցի ժամանակ հայտարարել է Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն:

Կառավարության ղեկավարն ընդգծել է նաեւ, որ ոչ ոք չի ցանկանում 72-ամյա կնոջը բանտ ուղարկել, բայց եթե նա, այնուամենայնիվ, գնա այս քայլին, կդատապարտի իրեն եւ բոլոր այն մարդկանց, ովքեր իր կողքին կլինեն երկրի ղեկավարի նստավայրում. պետություն:

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԹԱՑՔ Է ՏՎԵԼ

ԻՆՉ ԿԼԻՆԻ ՉԱԽՈՅԱՆԻ ՎԱՐՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դատախազությունն ընթացք է տվել Տարոն Չախոյանի գործողությունների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի նախագահի պաշտոնից ապօրինաբար հեռացված, ՀՀ ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանի հաղորդմանը:

«Ժողովուրդ» օրաթերթին այս մասին հայտնել են դատախազությունից:

Ավելի վաղ Թագուհի Թովմասյանը գրել էր. «Դիմել եմ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին, որպեսզի հանձնարարի իրավապահներին զբաղվել իմ մասին սուտ մատնություն կատարած, կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ, Տարոն Չախոյանի հայտարարություններով:

Հիշեցնեմ, որ նախօրեին իմ՝ միջազգային գործընկերներին ուղարկել էի գրություններ՝Հովիկ Աղազարյանի անձնական տվյալների պաշտպանության խախտումների մտահոգիչ փաստերի վերաբերյալ: Ներկայացրել էի ինչպես ներպետական օրենսդրությունը, այնպես էլ՝միջազգային իրավունքի նորմեր, որոնք արգելում են մարդու անձնական գրագրության հանրայնացումը: Նաեւ շեշտել էի գրության մեջ, որ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Տարոն Չախոյանի հետ փոխկապակցված կայքերը պատգամավոր Հովիկ Աղազարյանի սեռական կողմնորոշման մասին թիրախավորված հոդվածներ են գրել:

Իմ հանրային քաղաքական գործունեության արդյունքում՝ այդ գրություններից հետո, ես հայտնվել եմ Կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ Տարոն Չախոյանի թիրախում: Նա իր սոցցանցի էջում եւ իրեն փոխկապակցված կայքերում թույլ է տվել ոչ միայն վիրավորական ու անպատասխանատու գնահատականներ իմ անձի վերաբերյալ, այլեւ՝ տարածել է բացարձակ սուտ պատմություն, թե իբր տարիներ առաջ ես ապօրինի ձայնագրել եմ ինչ-որ նիստի ընթացքում Փաշինյանի խոսքերը եւ դա փոխանցել Սերժ Սարգսյանին: Ու բացի այդ, պարբերաբար ինֆորմացիոն արտահոսքեր եմ արել ՔՊ նիստերից:

Քանի որ ներկայացվածը ոչ միայն քաղաքացիաիրավական հարց է, այլ նաեւ քրեաիրավական գնահատականի անհրաժեշտություն կա, ապա

ՊԱՀԱՆՋԵԼ ԵՄ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՑ ՀԱՆՁՆԱՐԱՐԵԼ իրավապահ մարմիններին՝

• պարզելու, թե Սերժ Սարգսյանին փոխանցված ձայնագրությունը ո՞վ կամ ովքե՞ր, ե՞րբ եւ ի՞նչ պայմաններում են արել,

• ո՞վ կամ ովքե՞ր են մասնակցել այդ օրվա հանդիպմանը, ինչպե՞ս են ձայնագրել եւ ինչպե՞ս են փոխանցել Սերժ Սարգսյանին,

• Տարոն Չախոյանից պահանջել ներկայացնել իր հայտարարությունը ապացուցող փաստեր, չներկայացնելու դեպքում՝ ՊԱՀԱՆՋԵԼ հարուցել նոր վարույթ նրա նկատմամբ՝ սուտ մատնության հատկանիշներով:

• Պարզել թե ես ՔՊ ո՞ր նիստին եմ մասնակցել, ի՞նչ արտահոսք եմ կազմակերպել: Եվ եթե կրկին նա չի կարողանա ներկայացնել ապացույցներ, որ արտահոսք եմ արել, ապա սուտ մատնության վարույթի շրջանակներում դիտարկել նրան պատասխանատվության ենթարկելու հարցը:

ՏԵՂԵԿԱՑՆԵՄ, որ

• Տարոն Չախոյանի կողմից հիշատակված ապօրինի ձայնագրության օրվա հանդիպմանը ես չեմ մասնակցել, հետեւաբար չէի կարող ձայնագրել (թեեւ ինձ համար ընդհանրապես մերժելի է գաղտնի ձայնագրություններ անելը)

• ՔՊ («Իմ քայլը») խմբակցության նիստերին 2019-ից սկսած 2 տարի չեմ մասնակցել՝ արտահոսքերի մեղադրանքներից խուսափելու համար: Հետեւաբար չէի կարող արտահոսք անել միջոցառումներից, որոնց չեմ մասնակցել:

Ակնկալում եմ Նիկոլ Փաշինյանի արագ արձագանքը, քանի որ այն անմիջականորեն կապ ունի Կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալի հետ, ով ինձ թիրախավորում է իմ քաղաքական եւ իրավապաշտպան գործունեության համար:

Ապօրինի ձայնագրություն կատարելը համարվում է օրինախախտում, եւ դրա իրականացնողը պետք է պատասխանատվության ենթարկվի:

Իսկ եթե նման ձայնագրության մասին սուտ մատնություն է կատարվում որեւէ մեկի՝ այդ թվում նաեւ պետական պաշտոնյայի կողմից, նա նույնպես պետք է պատասխանատվություն կրի:

Տարոն Չախոյանը ստախոս է»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՎԻՆՅԱՆԻ ՏՈՄՍԵՐԸ ՓՈԽՀԱՏՈՒՑՎԵԼ ԵՆ

Նոյեմբերի 22-ին մեր՝ ԱՄՆ կատարած այցից հետո տեղեկացա, թե ինչ գներով են ձեռք բերվել տոմսերը՝ մասնավորապես ինձ համար, Երեւանի քաղաքապետարանի գործակարգավորական նիստին հայտարարեց քաղաքապետ Տիգրան Ավինյանը՝ արձագանքելով այս մասին տարածված լայն քննարկումներին:

«Անկեղծ ասած՝ ես նույնպես մի փոքր ապշած էի այդ թվերից: Հետո մի փոքր խորացա եւ հասկացա, որ ընդհանուր անպատասխանատվության եւ անտարբերության որոշակի խնդիր կա: Նոյեմբերի 22-ի այցի համար տոմսերը ձեռք են բերվել նոյեմբերի 20-ին, եւ եթե մեկ օր ուշացումով էլ ձեռք բերեինք՝ կարող է կրկնակի կամ եռակի անգամ թանկ գնեինք: Որոշում եմ կայացրել այդ ծախսն ամբողջապես փոխհատուցել ինքնուրույն»,- ասաց Ավինյանը:

Նա խնդրեց ներկայացնել, թե երբ է այցը հաստատվել, երբ եւ ինչ պատճառով տեղեկատվություն չի տրվել ու գործողություն չի եղել:

«Ինքս կառաջարկեմ, թե ինչ պատասխանատվության պետք է ենթարկվեն պատասխանատուները», - ասաց Ավինյանը:

ԿԲԱՐՁՐԱՑՎԵ՞Ն ՆՈՏԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ

Հայաստանի Կառավարությունը նախատեսում է փոփոխություններ կատարել նոտարական ծառայությունների սակագների սահմանման գործում՝ հաշվի առնելով վերջին տասնամյակում երկրի սոցիալ-տնտեսական փոփոխությունները:

Որոշման նախագծի հիմքն այն է, որ 2011 թվականից ի վեր սոցիալ-տնտեսական ցուցանիշներն էականորեն փոխվել են. ՀՆԱ-ի աճ՝ ավելի քան 3 անգամ, միջին աշխատավարձի կրկնակի աճ, սպառողական գների ինդեքսի 47 տոկոս աճ:

Բացի այդ, «Նոտարիատի մասին» օրենքի փոփոխությունների արդյունքում նոտարական գործողությունների շրջանակն ընդլայնվել է, ավելացել է իրականացվող ծառայությունների ծավալը: Այս ամենին զուգահեռ նոտարների համար սահմանվել է նոր հարկման ռեժիմ՝ պարտադիր ԱԱՀ-ի եւ շահութահարկի կիրառմամբ, ինչը զգալիորեն ավելացրել է նրանց հարկային բեռը:

Նախագծով առաջարկվում է թարմացնել նոտարական ծառայությունների համար սահմանվող սակագները՝ համապատասխանեցնելով դրանք սոցիալ-տնտեսական իրավիճակին, ծառայությունների համար սակագները կաճեն մոտ 50 տոկոսով, նոր ծառայությունների համար նոր սակագների կսահմանվեն՝ դրանց տնտեսական հիմքերի ապահովմամբ:

Ակնկալվող արդյունքներն են նոտարական ծառայությունների որակի բարելավումը եւ համակարգի արդյունավետության բարձրացումը, նոտարական գրասենյակների նյութատեխնիկական ապահովվածության եւ աշխատակիցների սոցիալական երաշխիքների ամրապնդումը, պետական բյուջեի հավելյալ հարկային եկամուտների ակնկալվող աճը՝ մինչեւ 1.6 մլրդ դրամի չափով:

16-ԱՄՅԱ ԱՂՋԿԱ ՎԻՃԱԿԸ ԾԱՅՐԱՀԵՂ ԾԱՆՐ Է

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԸ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ԴԵՂԵՐ ԵՆ ԽՄՈՒՄ

Անչափահասների շրջանում մսահոգիչ իրավիճակ է: 2 շաբաթվա ընթացքում արդեն 3-րդ դեպքն է գրանցվում, որ անչափահասները խմում են մեծ քանակի կոլխիցին տեսակի դեղահաբ ու ծայրահեղ ծանր վիճակում տեղափոխվում հիվանդանոց: Արդեն երկու անչափահաս է մահացել ազատ վաճառքում գտնվող այս դեղահաբը մեծ քանակությամբ օգտագործելու արդյունքում, ինչը խիստ մտահոգություններ է տալիս: Իսկ իրավապահները այս դեպքերով ինքնասպանության հասցնելու հատկանիշներով քրեական վարույթ են նախաձեռնել ու քննություն են իրականացնում:

Խոսենք փաստերով

Դեկտեմբերի 9-ին «Արաբկիր» ԲԿ-ում 14-ամյա երեխա էր մահացել:

«Տեղեկացնում ենք, որ 14 տարեկան երեխան տանը մեծ քանակի դեղեր էր ընդունել եւ սուր թունավորումով տեղափոխվել Ալավերդիի հիվանդանոց, որտեղից սուր երիկամային անբավարարության պատճառով մեկ օր անց տեղափոխվել է «Արաբկիր» բժշկական համալիր: «Արաբկիրում» ախտորոշվել է բազմաօրգանային սուր անբավարարություն, եւ բժիշկների ջանքերը, ցավոք, արդյունք չեն տվել», - նշված էր հայտարարության մեջ:

Դեկտեմբերի 19-ին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ «Մուրացան» համալսարանական հիվանդանոցում 14 տարեկան աղջիկ երեխա է մահացել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նրան հիվանդանոց էին տեղափոխել ծայրահեղ ծանր վիճակում: Ըստ նախնական վարկածի՝ նա մեծ քանակի կոլխիցին տեսակի դեղահաբ էր ընդունել:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ իրավապահները դեպքով քննություն են սկսել:

Դեկտեմբերի 21-ին, մեր տեղեկություններով, 16-ամյա աղջկա ինքնազգացողությունը վատացել էր Կենտրոնի քննչական բաժնում, երբ քննիչները նրա նկատմամբ բռնություն կիրառած կասկածյալի հետ առերեսում էին իրականացրել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ աղջիկը, ըստ նախնական տեղեկությունների, մոտ 60 հատ դեղահաբ է խմել:

Ավելի վաղ գրել էինք՝ SHAMSHYAN.com-ի տեղեկություններով՝ «Մուրացան» մանկական հիվանդանոց էր տեղափոխվել 16-ամյա մի աղջիկ: Տեղափոխված աղջիկը Երեւանի բնակիչ է, ով մեծ քանակությամբ դեղորայք է խմել, ու ինքնազգացողությունը վատացել է, ինչից հետո նրան տեղափոխել են հիվանդանոց:

Ըստ տեղեկությունների՝ նրա նկատմամբ բռնություն է իրականացվել, ինչից հետո նա դիմել է այդ ծայրահեղ քայլին:

Հիվանդանոց են ժամանել ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Նորք-Մարաշ բաժնի օպերատիվ խումբը՝բաժնի պետ Մառլեն Հակոբյանի գլխավորությամբ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՈՐՈՇՈՒՄ՝ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ՆԿԱՐՆԵՐԸ ՊՂԾԱԾ ԿՆՈՋ ԳՈՐԾՈՎ

Պուշկինի 43 հասցեում գտնվող պատին զինծառայողների գրաֆիտե նկարները պղծելու վերաբերյալ՝ մեղադրանքը ՔՕ 297-րդ հոդվածի 1-ին մասով, գործը ուղարկվել է դատարան:

Ինչպես հայտնի է, Պուշկինի 43 հասցեում զինվորների նկարները պղծած կնոջ գործը դատարանում է:

Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի էր դարձել, թե Պուշկինի 43 հասցեում զինվորների նկարները պղծած կինը ինչ է պատմել իրավապահներին, ինչու է գնացել այդ քայլին:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ նա իրավապահներին խոստովանել է, որ անձամբ ինքն է գնացել այդ քայլին:

Նա պատմել է, որ ամեն օր անցնում է Պուշկինի 43 հասցեի տարածքում ու մշտապես տեսնում այդ նկարները: Իրեն զայրացրել է, որ խոսում են մաքուր Երեւանի մասին, ու որոշել է 44-օրյա պատերազմի զինվորների նկարների կողքի գրառումները մաքրել ու այդ պահին նաեւ նրանց նկարներն է մաքրել:

Հիշեցնենք, որ ՀՀ ՆԳՆ-ն հայտնել էր, որ Երեւանի Պուշկինի փողոցի շենքերից մեկին պատկերված 44-օրյա պատերազմի մասնակիցների դիմանկարները ներկած կնոջը ձերբակալել են: Խուլիգանություն կատարելու կասկածանքով՝բերման է ենթարկվել Երեւանի բնակիչ, 61-ամյա Հասմիկ Գ.-ն: Ձերբակալվածը եւ կազմված փաստաթղթերը կներկայացվեն քննչական կոմիտե: 61-ամյա Հասմիկ Գրիգորյանը Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանի նախկին դասախոս է:

ԱՐԱՐԱՏՈՒՄ 14 ՏԱՐԵԿԱՆ ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ԵՆ ԴԱՆԱԿԱՀԱՐԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ դեկտեմբերի 20-ին «կրծքավանդակի կտրած-ծակած վերք» ախտորոշմամբ ծնողների ուղեկցությամբ ժամը 18:20-ին Արարատի հիվանդանոց է տեղափոխվել 14 տարեկան անչափահաս Է.Ա-ն:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ իրավապահները պարզել են, որ նույն օրը՝ ժամը 17:30-ին, Արարատ քաղաքի 1-ին հիմնական դպրոցի մոտ, անձնական հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ 13 տարեկան անչափահաս Ա.Փ-ն դանակով հարվածել է Է. Ա-ին: Իրավապահները ավելի ուշ բաց են թողել դանակահարողին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ անչափահասների վեճը սկսվել է հայհոյանքից:

Նյութերը՝Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

ԼՈՒՐԵՐ

ԿՅԱՆՔԻՑ ՔՐԿՎԱԾ 15 ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԳՈՐԾՈՎ

Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարեւորագույն գործերի քննության վարչությունում Ազատ գյուղի զինվորական կացարանում զոհված 15 զինծառայողների գործով իրականացվող քրեական վարույթից մեղադրյալ Ռ. Մաթեւոսյանի կողմից առերեւույթ հանցանք կատարելու դեպքի առթիվ իրականացված նախաքննության վարույթն անջատվել է, միաժամանակ նախաքննությունն ավարտվել է, որի վերաբերյալ ծանուցվել է նաեւ տուժող կողմը, այս մասին հայտնել է տուժողների իրավահաջորդների ներկայացուցիչ Նորայր Նորիկյանը:

Առաջիկա օրերի ընթացքում այդ վարույթի նյութերը կուղարկվեն դատարան:

«Ռ. Մաթեւոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 543-րդ հոդվածի 3-րդ մասով, համաձայն որի՝ Զորամասի օրվա վերակարգի մեջ մտնող անձի կողմից (բացի պահակախմբի եւ պարեկախմբի կազմի մեջ մտնող անձից) ներքին ծառայության կանոնագրքային կանոն խախտելը, եթե այդ արարքն անզգուշությամբ հանգեցրել է զորամասի տարածքում իրավախախտման, օրվա վերակարգի խափանման, ռազմական միջոցառման կամ մարտական առաջադրանքի խափանման կամ զորամասի տարածքից հափշտակության, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում, կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով»,- նշել է Նորիկյանը:

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ դեկտեմբերի 20-ից 23-ը ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 233 դեպք, որոնցից 9-ը՝նախկինում կատարված: Այս մասին հայտնում են ՆԳՆ-ից:

Նախկինում կատարված հանցագործություններից բացահայտվել է անձնական ունեցվածքի գողության՝7, գույքի դիտավորյալ վնասման եւ ճանապարհատրանսպորտային պատահարների 1-ական դեպք:

Հայտնաբերվել է 11 հետախուզվող, կամավոր ներկայացել՝6-ը:

Հայտնաբերվել է 1 անհետ կորած:

Գրանցվել է զենք-զինամթերքի կամավոր հանձման 6 դեպք:

Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 32 պատահար. 2 մարդ զոհվել է. 40-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝դեկտեմբերի 20-ից 23-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 133 դեպք, որից 9-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄՆՆԴԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ ԵՆ ՍԱՐՔՈՒՄ

Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհին՝ Դիլիջանի ոլորաններում, դարավանդը քանդել են, տեղում եգիպտացորենի վաճառքի կահավորված կրպակներ են տեղադրել, տարբեր օբյեկտներ կառուցել: Դիլիջանի բնակիչներն ասում են, որ այդ գործը կատարվում է Դիլիջան համայնքի ՔՊ-ական ղեկավար Դավիթ Սարգսյանի վերահսկողությամբ: Բնական ռելիեֆը քանդել են, միջավայրի տեսքը խաթարել, շրջակա միջավայրին վնաս պատճառել, իսկ բնապահպանական տեսչությունը չի նկատում կատարված խախտումները:

ԱՂՍՏԵՎԻ ԱՓՆ ԱՂԲԻ ՄԵՋ ԿՈՐԱԾ Է

Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղի կենտրոնում՝ գյուղապետարանի շենքի դիմաց, Աղստեւ գետի ափին տարատեսակ աղբ է թափված: Դա միջպետական ավտոճանապարհի կողքին է: Դրանից մի քանի տասնյակ մետր հեռավորությամբ՝ Մեծ հայրենականում զոհվածների հուշարձանի կողքին, մանկական խաղահրապարակ է, որի գունավոր ներկված պատի տակին տարատեսակ աղբ է թափված: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը Տավուշի մարզում աղբահանության, սանիտարական մաքրման եւ ծառայությունների մատուցման որակի բարելավման նպատակով նոյեմբերի 27-ին հանձնաժողով է ստեղծել. այդ հանձնաժողովը չի՞ տեսնում Հաղարծին գյուղի կենտրոնում առկա վատ վիճակը:

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԸ ՍԵՐՄՆԱՎՈՐՈՂ ՉԻ ԳՏՆՈՒՄ

Տավուշի մարզպետարանը հայտարարել է, որ կառավարության՝ 2024 թվականի օգոստոսի 22-ի N 1392-L որոշմամբ հաստատված՝ «Մթերատվության բարձրացման փորձնական ծրագրի» շրջանակներում նախատեսվում է պետական աջակցություն ցուցաբերել կովերի արհեստական սերմնավորման գործընթացին՝ յուրաքանչյուր սերմնավորման համար փոխհատուցելով 10 հազար դրամ (5 հազար դրամը կվճարի անասնատերը): Ծրագրի համաձայն՝ Տավուշի մարզում նախատեսվում է 2025 թվականին սերմնավորել 1410 գլուխ կով: Ըստ Տավուշի մարզպետարանի հայտարարության՝ այդ ծրագրին մասնակցելու հայտեր կարող են ներկայացնել այն կազմակերպությունները, որոնք ունեն. ա/ տվյալ ոլորտում գործունեություն իրականացնելու առնվազն մեկ տարվա փորձ եւ համապատասխան գործունեությամբ զբաղվելու հավաստագիր ունեցող մասնագետներ, բ/ ունեն վարկային դրական պատմության վերաբերյալ զեկույց, որի համաձայն՝ ըստ ԱՔՐԱ տեղեկատվության համակարգի, դիմումի ներկայացման օրվան նախորդող 12 ամիսների ընթացքում չեն ունեցել գումարային 60 օր եւ ավելի ժամկետով ժամկետանց վարկային պարտավորություններ: Հայտերի ընդունման վերջնաժամկետն էր հայտարարվել սույն թվականի դեկտեմբերի 12-ը՝ ժամը 12:00-ն: Սակայն հայտատու չի եղել, եւ Տավուշի մարզպետարանը նոր հայտարարություն է տարածել, որ հայտերն ընդունվում են մինչեւ 2025 թվականի հունվարի 7-ը՝ ժամը 18-ն:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

«ԹԻՄ ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ»

ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԸ ՑՈՒՑԱԿՎԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱՅՈՒՄ

Team Telecom Armenia-ի Կայուն զարգացման պարտատոմսերը մեծ պահանջարկի շնորհիվ տեղաբաշխվեցին նախատեսված ժամանակից ավելի վաղ եւ պաշտոնապես ցուցակվեցին Հայաստանի ֆոնդային բորսայում:

Հայաստանի ֆոնդային բորսայի գլխավոր տնօրենը ստորագրեց պարտատոմսերի ցուցակման որոշումը, որի համաձայն՝ սույն թվականի դեկտեմբերի 25-ից Team Telecom Armenia-ի պարտատոմսերը պաշտոնապես շրջանառվելու են բորսայում՝ հնարավորություն տալով բոլոր ֆիզիկական եւ իրավաբանական անձանց գնելու եւ վաճառելու Team-ի պարտատոմսերը:

Բարձր գնահատելով ընկերության նկատմամբ ձեւավորված վստահությունը՝ Team Telecom Armenia-ի գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը նշեց, որ թիմային ու արդյունավետ աշխատանքի արդյունքում է, որ կարողացել են դառնալ նման պարտատոմսեր թողարկած առաջին հայկական ընկերությունը. «Team Telecom Armenia-ն մուտք է գործում զարգացման նոր փուլ՝ ներդրողներին տալով իրենց խնայողություններն արդյունավետ օգտագործելու, Հայաստանի հեռահաղորդակցության ենթակառուցվածքների արդիականացմանն ու դեպի կայուն թվային ապագա անցնելու հնարավորություն: Այսկերպ յուրաքանչյուր ներդրող ազդեցություն է ունենում երկրի տնտեսության զարգացման վրա»:

Հայաստանի ֆոնդային բորսայի գլխավոր տնօրեն Հայկ Եգանյանը նշեց՝ բորսայում խոշոր ընկերությունների ակտիվ ներգրավվածությունը ոչ միայն վկայում է կապիտալի շուկայի վստահության եւ գրավչության աճի մասին, այլեւ ծառայում է որպես խթան երկրի տնտեսական զարգացման համար. «Team Telecom Armenia-ի այս նախաձեռնությունը վառ օրինակ է, թե ինչպես կապիտալի շուկան կարող է աջակցել տնտեսության իրական հատվածի զարգացմանը՝ նպաստելով ներդրումների ներգրավմանն ու նոր նախագծերի իրականացմանը»:

Ընկերության 75 միլիոն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով պարտատոմսերը ձեռք է բերել շուրջ 300 ներդրող: Թողարկումը գրավել է ոչ միայն հարյուրավոր ֆիզիկական եւ իրավաբանական անձանց, այլեւ առաջատար միջազգային ֆինանսական հաստատությունների ուշադրությունը, որոնց թվում են հիմնական ներդրող Ասիական զարգացման բանկը (ADB), Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC), Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը (EBRD) եւ Proparco-ն:

Team Telecom Armenia-ի Կայուն զարգացման պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացրել է «Ամերիաբանկ»-ը:

«Մեզ համար պատիվ է առանցքային դերակատարում ունենալ Team Telecom Armenia-ի պարտատոմսերի տեղաբաշխման գործընթացում, որն իրապես համարում ենք պատմական իրադարձություն հայկական կապիտալի շուկայի համար, քանի որ նման պարտատոմսերի առաջին թողարկումն է մեր երկրում: Լիահույս ենք, որ ներդրողների բավականին դիվերսիֆիկացված ցանկի շնորհիվ կունենանք նաեւ երկրորդային ակտիվ շուկա»,- նշեց «Ամերիաբանկ»-ի Ներդրումային բանկինգի գծով տնօրեն Առնո Մոսիկյանը:

Ներգրավված միջոցները Team Telecom Armenia-ն ուղղելու է ընկերության ռազմավարական առանցքային ուղղությունների զարգացմանը, մասնավորապես բջջային ու ֆիքսված ցանցերի, Team Energy էլեկտրական մեքենաների լիցքավորման կայանների ենթակառուցվածքի ընդլայնմանը, ինչպես նաեւ վարկերի ամբողջական վերաֆինանսավորմանը:

Team Telecom Armenia-ի արժեթղթերը հնարավոր է ձեռք բերել նաեւ Հայաստանի ֆոնդային բորսայի առեւտրային համակարգի միջոցով՝ մոտենալով Հայաստանի ֆոնդային բորսայի անդամ հանդիսացող ցանակացած բանկ կամ ներդրումային ընկերություն՝ բացելով բրոքերային հաշիվ եւ ներկայացնելով պարտատոմսերի ձեռք բերման հայտ: Մանրամասները՝ www.amx.am:

Team Telecom Armenia-ի մասին

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Team-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին: «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն առաջին տելեկոմ ընկերությունն է, որը Հայաստանում իրականացրել է բաժնետոմսերի առաջնային հրապարակային տեղաբաշխում (IPO)՝ դառնալով էլ ավելի բաց ու հանրային: Ընկերության բաժնետոմսերը ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայում:

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ

ՏԵՎԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ Է՝ ԼԱՐՍԸ ՓԱԿ Է

Հյուսիսային Օսեթիայի ճանապարհային երթեւեկության կազմակերպման կենտրոնից հայտնում են, որ Վերին Լարս անցակետի մոտ գրեթե 850 հայկական բեռնատար է սպասում:

Մցխեթա-Ստեփանծմինդա-Լարս միջազգային նշանակության ավտոմոբիլային ճանապարհի Գուդաուրի-Կոբի հատվածը բաց է բոլոր տրանսպորտային միջոցների համար, բայց խցանումները չեն վերանում եղանակային վատ պայմանների պատճառով:

Ըստ վերջին տվյալների՝ անցակետը հատելու համար 2173 տրանսպորտային միջոց է հերթագրված, որոնցից 847-ը հայկական են:

Նշենք, որ Վրաստանը Մցխեթա-Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհի ամենավտանգավոր հատվածը շրջանցող ճանապարհ է կառուցում: Խոսքը ինը կիլոմետրանոց թունելի մասին է:

Նախագծով նախատեսվում է կառուցել 23 կմ երկարությամբ երկշերտ բետոնե ճանապարհ, 5 կամուրջ եւ 5 թունել:

Նախագծի ավարտից հետո տրանսպորտային միջոցները Թբիլիսիից Ստեփանծմինդա կհասնեն 1 ժամ 45 րոպեում: Արդյունքում՝ մեքենաների անխափան երթեւեկությունը կապահովվի ամբողջ տարվա ընթացքում:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 32 պատահար. 2 մարդ զոհվել է. 40-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՖԱՍԹ» ԲԱՆԿԸ ՎԵՐԱԲԵՆԴԱՎՈՐԵԼ Է ԱՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ

«ֆասթ» բանկը վերաբրենդավորել է Երեւանի Ավան վարչական շրջանում գտնվող մասնաճյուղը: «ֆասթ» բանկը թվային լուծումների եւ առցանց գործիքակազմի հարստացմանը զուգահեռ, շարունակում է իր մասնաճյուղերի արդիականացման եւ տեխնիկապես վերազինման գործընթացը:

«ֆասթ» բանկի «Ավան» մասնաճյուղի կառավարիչ Վահե Կեսոյանը նշել է. «Նորարար, ժամանակակից ոճով կահավորված ընդարձակ մասնաճյուղում հաճախորդները 24/7 գրաֆիկով կարող են օգտվել բանկի կողմից առաջարկվող ծառայություններից, կատարել միջազգային փոխանցումներ, օգտվել վարկատեսակներից, ներդնել ավանդ կամ ձեռք բերել պարտատոմսեր, կատարել վճարումներ, տարադրամի փոխարկում եւ այլն»:

Մասնաճյուղում առկա է հերթի էլեկտրոնային կառավարման համակարգ, հարմարավետ սպասասրահ, ավտոմատ ինքնասպասարկման սարքավորումներ, որոնք թույլ են տալիս իրականացնել կանխիկի մուտքագրում, կատարել վարկերի եւ կոմունալների վճարումներ: «ֆասթ» բանկը՝ որպես «կանաչ» քաղաքականություն որդեգրած ընկերություն, այս մասնաճյուղում եւս ներդրել է առանց թղթի կիրառման մոտեցումը՝ ստորագրել փաստաթղթերը թվային եղանակով եւ ստանալ ու պահպանել դրանք էլեկտրոնային ձեւաչափով:

«ֆասթ» բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում, գործում է նաեւ բանկի հավելվածը: «Ֆասթ» բրենդն այս տարի տոնել է ստեղծման 30-ամյակը:

Wildberries-ՈՒՄ ԿՏՐՈՒԿ ԹԱՆԿԱՑՈՒՄՆԵՐ ԵՆ

Ամանորին ընդառաջ, բացի սննդի թանկացումներից, նաեւ թանկանում են հագուստը, կոշկեղենը, ամանորյա զարդարանքները:

Հետաքրքիրն այն է, որ ոչ միայն տեղի խանութներում են թանկանում, այլեւ օնլայն առեւտրի հարթակներում:

«Ժողովուրդ» օրաթերթին քաղաքացիները հերթական անգամ ահազանգում են, որ Wildberries օնլայն առեւտրի հարթակում դեկտեմբերի 15-ից հետո վաճառվող ապրանքատեսակների գները կտրուկ բարձրացել են, այդ թվում՝ հագուստները, ամանորյա զարդարանքները, սնունդը, ինչն էլ կապում են ամանորյա թանկացումների հետ:

Սա առաջին դեպքը չէ, երբ օնլայն առեւտրի հարթակը տհաճ անակնկալներ է մատուցում այդ ցանցից օգտվողներին, չնայած այն հանգամանքին, որ հավելվածից օգտվողներն ավելի շատ են:

Հիշեցնենք, որ դեռ ամռանն էլ Wildberries օնլայն հարթակից օգտվողներն ահազանգում էին, որ իրենց գնած ապրանքը շաբաթներ շարունակ չէր հասնում իրենց, սակայն խնդիրը լուծվեց:

Fastex 9

ԿԱՅԱՑԵԼ Է Harmony Meetup VI-Ը

Ս.թ. դեկտեմբերի 13-ին InterContinental Ras Al Khaimah-ում Fastex-ի նախաձեռնությամբ կայացել է Harmony Meetup VI-ը՝ մեկ հարկի տակ համախմբելով Web3 առաջնորդներին, նորարարական գաղափարներով հետաքրքրվողներին եւ ոլորտի փորձագետներին: Միջոցառման հիմնական նպատակը բլոկչեյն տեխնոլոգիաների եւ դրա փոխակերպող ներուժի բացահայտումը եւ ինտեգրացիան էր Միջին Արեւելքի եւ Հյուսիսային Աֆրիկայի տարածաշրջանում, որտեղ մեծ արագությամբ զարգանում է թվային ափխարհը: Harmony Meetup VI-ի մի քանի օրերի ընթացքում ներկայացվել են ոլորտային կարեւոր թեմաներ, բացահայտվել արդյունավետ գործակցության հնարավորություններ, անդրադարձ է կատարվել ադակենտրոնացված ֆինանսների ապագային, թվային ինքնությանը եւ բլոկչեյն նորարարություններին, տեղի են ունեցել ուշագրավ պանելային քննարկումներ՝ ոլորտի առաջատար մասնագետների մասնակցությամբ:

Fastex-ի գործադիր տնօրեն Վախթանգ Աբրահամյանը կիսվել է Fastex-ի վերջին ձեռբերումներով, այդ թվում՝ PoSA կոնսենսուսային ալգորիթմի թողարկմամբ, որն իր հերթին ապահովում է Բահամուտ ցանցի կայունությունն ու անվտանգությունը: Իր խոսքում պարոն Աբրահամյանը նշել է. «Harmony Meetup VI-ն արտացոլում է մեր նվիրումը՝ստեղծելու հարմարավետ Web3 էկոհամակարգ: Մենք նպատակաուղղված ենք ստեղծել զարգացող հարթակ, որը կբացահայտի ապակենտրոնացված ֆինանսների ընձեռած հնարավորությունները»:

«Բլոկչեյնի ներուժը. ռազմավարական առաջնորդությունն օրենսդրական կարգավորումների, տվյալների պահպանման եւ նորարարության» թեմայով պանելային քննարկումը վարել է CoinDesk-ի լրագրող Ջեֆֆ Ուիլսերը: Պանելային քննարկմանը մասնակցել են ոլորտի առաջատար ներկայացուցիչներ, այդ թվում՝ Միջին Արեւելքի եւ Հյուսիսային Աֆրիկայի տարածաշրջանում Zodia Custody-ի վաճառքների գծով ղեկավար Ջերի Աֆենտակիսը, Novo Capital-ի ներկայացուցիչ Թիմ Չենը, iAdvisory-ի հիմնադիր Կառլ Թլայսը, Dubai Blockchain Centre-ի տեխնոլոգիական գծով տնօրեն Իգոր Արխիպենկոն եւ Fastex-ի գործադիր տնօրեն Վախթանգ Աբրահամյանը:

Novo Capital-ի ներկայացուցիչ Թիմ Չենն իր խոսքում անդրադարձել է տարածաշրջանի վերջին միտումներին. «Մերձավոր Արեւելքում այս պահին ակտիվ ընթանում է թվային ակտիվների թոքենիզացիան: Ի տարբերություն ԱՄՆ-ում կամ այլ տարածաշրջաններում կայուն քոինների արժեքների՝ ԱՄԷ-ում դրանք ավելի ցածր են: Սա բլոկչեյն ոլորտում հիանալի ներդրում է առաջիկա 5 տարիների կտրվածքով», - ասել է նա:

Պանելային քննարկումների ժամանակ Web3 մասնագետներն անդրադարձել են օրենսդրական կարգավորումների, տվյալների պահպանման, անվտանգության մեխանիզմների, իրավական ոլորտում գործունեություն ծավալելու առանձնահատկություններին, զարգացող միջավայր ստեղծելու մեխանիզմների մշակման գործընթացներին, ինչպես նաեւ ապակենտրոնացված միջավայրում թվային ինքնության, խաղային եւ NFT ոլորտի վերջին միտումների հետ դրանք միավորելու հնարավորություններին:

Fastex-ի մասին

Fastex-ն արագ զարգացող Web3 էկոհամակարգ է, որն իր օգտատերերին տալիս է հսկայական հնարավորություններ եւ հարմարավետ միջավայր՝ առաջարկելով Fastex Exchange կրիպտո փոխանակման հարթակը, Fastex Card-ը, Fastex Wallet-ը եւ ftNFT-ն՝ իր հարթակներով եւ ֆիզիթալ սփեյսներով, ինչպես նաեւ YoHealth՝ առողջ ապրելակերպը խթանող հավելվածը: Fastex-ը կարեւորում է անվտանգ եւ հուսալի միջավայրի ապահովումը համաշխարհային թվային ֆինանսների զարգացող աշխարհում՝ մշտապես հետեւելով ոլորտի միտումներին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ԳՈՎԱԶԴ 9

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Ռաֆայել Գեղամի Հարությունյանս Արտաշատ քաղաքի տարածքում կորցրել եմ Արտաշատի պետական քոլեջի՝ 2007 թ. հունիսի 12-ի որոշմամբ ինձ տրված «Ատամնատեխնիկ» մասնագիտությամբ թիվ ԱԿ 059845 դիպլոմը:

Գտնողին խնդրում եմ զանգահարել 077 922 777 հեռախոսահամարով:

1% idcoin՝ ԱՄԱՆՈՐՅԱ ՏԱՆՔԱՆՔԻ ՓՈԽԱՐԵՆ

Անհավատալի արագությամբ անցավ 2024-ը, ու նորից Ամանոր է՝ նախատոնական պատրաստություններով, չգնված նվերների որսով, էկզոտիկ մթերքների մրցավազքով ու խոհարարական փայլատակումներով: Իսկ քանի որ այս նյութը գրողը, թարգմանողը, հրապարակողն ու ընթերցողը հիմնականում աշխատավոր հասարակ մարդիկ են ու կարոտ են հանգստի, եկել ենք մի քանի կարեւոր նախատոնական խորհուրդ-հիշեցումներով:

1. Նվերների շուրջ ավելի երկար մտածեք: Պետք չէ գնել անպետք ու աննպատակ իրեր զուտ տուփը լցնելու համար, պետք չէ նաեւ նվիրել այն, ինչը վստահ չեք, որ դուր կգա: Հիշեք պատասխանատու սպառման ու մինիմալիզմի մասին, ու միշտ վարվեք այնպես, որ ձեր նվերի մասին չասեն՝ «հիմա ես սա ու՞ր դնեմ»: Ավելի լավ է նվիրել մեկ փոքր ու արժեքավոր իր, քան տասը կտորից բաղկացած փառահեղ-գունավոր տուփեր, որոնց պարունակության կեսը զարդարանք է ու երբեք պետք չի գալու:

2. Մի՛ գնեք անհարմար, թանկ ու ճոխ շորեր տոնական օրերի համար: Կամ էլ՝ գնեք, բայց դրանք մի կրեք նրբաբլիթներ ու տոլմա տաքացնել-թարմացնելու անվերջ շրջապտույտի ընթացքում: Դրանք թողեք կորպորատիվների ընթացքում գործընկերներին ապշահար անելու համար: Իսկ տնային հողաթափերը փայլուն թեփուկավոր հագուստի հետ հաստատ չեն համադրվում:

3. Տոներն ավելի կարճ են, քան կարող եք պատկերացնել, եթե, իհարկե, մեկամսյա արձակուրդ չեք վերցրել: Սա նշանակում է, որ պետք չէ Նոյյան Տապանի մասշտաբներով պատրաստվել երեք-չորս օրվա համար: Ոչինչ չի պատահի, եթե չորս աղցանի փոխարեն պատրաստեք երկուսը, հինգ նախուտեստի փոխարեն նախատեսեք երեքը, իսկ սեղանին փռված տխուր գոճու փոխարեն պարզապես համեղ տաքուտեստ լինի: Փորձել ենք, գիտենք, եւ ոչ ոք մեզ ամոթանք չի տվել:

4. Ինչու՞ առհասարակ տանջվել ու պատրաստել, եթե պատրաստելը ձեր ամենամեծ տաղանդը չէ: Հատկապես, եթե կա հնարավորություն պատվիրելու բոլոր ամենասիրելի ուտելիքները՝սիրված ռեստորաններից ու սրճարաններից: Սկսած մսային տաք ուտեստներից մինչեւ թեթեւ աղցաններ, արեւելյան քաղցրավենիքից մինչեւ ամենատարածված տորթեր ու թխվածքներ, կարելի է հանգիստ խղճով պատվիրել Yandex Eats-ից, վճարել IDBank-ի կցված ցանկացած քարտով, ստանալ 1% idcoin ու անցկացնել ազատ ժամանակը սիրելիների հետ: Իսկ կուտակված idcoin-երը կարող եք օգտագործել հենց սիրելիների հետ: Այս առաջարկը գործում է մինչեւ 2025թ. հունվարի 31-ը:

Վերջում մեզ մնում է միայն հիշեցնել, որ ամանորյա ու սուրբծննդյան տոները սիրո ու ընտանիքի մասին են, ոչ թե ուտելիքի:

ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

Danielyan Sweets. «ԱԿԲԱ» ԼԻԶԻՆԳ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՓՈՔՐ ԵՐԱԶԱՆՔԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵԾ ԲԻԶՆԵՍ

Դանիելյաններն իրենց ընտանեկան բիզնեսը սկսել են Սոչիակի երկրաշարժից հետո՝ փոքր տնակից, իսկ այժմ ունեն արդեն 500-ից ավելի աշխատակից: Ընտանիքը Danielyan Sweets եւ Danielyan Bakery բրենդների ներքո դասրասում է տարատեսակ տորթեր ու թխվածքներ, բարձրորակ հացաբուլկեղեն, հացային արտադրանքներ ու խաղրավենիքներ: Դանիելյաններն արտադրություններ եւ վաճառասրահներ ունեն Սոչիակում, Վանաձորում, Արթիկում եւ Երեւանում:

Արտադրության գործընկերը Հայաստանի լիզինգային շուկայի առաջատար «Ակբա» լիզինգն է, որի աջակցությամբ ընկերությունը համալրվել է հացաբուլկեղենի, խմորեղենների ու հրուշակագործության մեջ օգտագործվող գործընթացները ավտոմատացնող սարքավորումներով, ինչպես նաեւ սառնարանային տեխնիկայով, արտադրական վառարաններով, ջեռոցներով:

«Մեր բոլոր ձեռնարկությունների հիմքը Սոչիակ քաղաքում է: Երկրաշարժից անմիջապես հետո ենք սկսել զբաղվել բիզնեսով. ամեն ինչ սկսել ենք փոքր տնակից: Աշխատանքները սկսել ենք մեկ պարկ ալյուրից, ունեինք մի քանի կտոր արտադրանք, վաճառում էինք ու ստացված գումարն արդեն օգտագործում էինք զարգացման համար: Հիմա՝ արտադրությունը սկսելուց առաջ, ուսումնասիրում ենք շուկան, տեղի գները, պահանջները եւ փորձում շուկային համապատասխան առաջարկներ անել: Հաճախորդների հետ մաքսիմալ ազնիվ ենք, գուցե հենց դա էլ մեր հաջողության գրավականն է:

«Ակբա» լիզինգի հետ համագործակցությունը սկսել ենք մի քանի տարի առաջ. դիմեցինք եւ սկսեցինք համագործակցությունը, որը մինչեւ այսօր էլ շարունակվում է: Այն պահից սկսած, երբ սկսեցինք համագործակցել «Ակբա» լիզինգի հետ, մեր ձեռնարկությունները սկսեցին ընդլայնվել ու տարածվել:

Կարծում եմ, որ Հայաստանում շատ մեծ հնարավորություններ կան աշխատելու համար, ու ես ինքս էլ գիտեմ, որ ինչքան շատ աշխատեմ, այդքան շատ գումար կգեներացնենք, ավելի շատ արտադրամասեր կբացենք»,- նշել է Danielyan Sweets եւ Danielyan Bakery ընկերությունների հիմնադիր Տիգրան Դանիելյանը:

Առաջիկայում Danielyan Sweets-ն ու Danielyan Bakery-ն վաճառասրահ կբացեն նաեւ Գյումրիում. աշխատանքներ են իրականացվում Հայաստանի սահմաններից դուրս գործունեություն ծավալելու համար:

«Ակբա» լիզինգի 100% բաժնետերն «Ակբա» բանկն է: «Ակբա» լիզինգը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԳՆԴԵՎԱՋԻ ՍԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՒՄ Է

Ավարտվել են Վայոց ձորի մարզի Գնդեվազի Սբ Աստվածածին եկեղեցու որմնանկարի ամրակայման եւ վերականգնման աշխատանքները:

Վայոց ձորի Գնդեվազի՝ 17-րդ դարով թվագրվող Սբ Աստվածածին եկեղեցու եւ դրանում գտնվող որմնանկարի վերականգնման աշխատանքները սկսվել են 2024 թ. եւ իրականացվում են ԿԳՄՍ նախարարության միջոցներով: Եկեղեցու վերականգնման աշխատանքները կավարտվեն 2025 թ:

Եկեղեցում գտնվող որմնանկարը վերանկարվել է 1906 թ.: ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատվերով որմնանկարի ամրակայման եւ վերականգնման նախագիծը 2021-2022 թթ. իրականացրել է Ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանը (նախագծի հեղինակ՝ որմնանկարների վերականգնող մասնագետ Արժանիկ Հովհաննիսյան):

Որմնանկարների ամրակայման եւ վերականգնման աշխատանքների իրականացման նպատակով 2024 թ. ԿԳՄՍ նախարարության կողմից հայտարարված բաց ընթացակարգով մրցույթում հաղթող է ճանաչվել «Ռեստարտ 1» ՍՊԸ-ն: Ամրակայման եւ վերականգնման աշխատանքների իրականացումից հետո որմնանկարները ծածկվել են պաշտպանիչ թաղանթով: Այն եկեղեցու ուխտավորների համար հասանելի կդառնա եկեղեցու վերականգնման աշխատանքների ավարտից հետո:

ԱՅՑԵԼԵԼՈՒԹՅՈՒՆ՝ «ՄԻԿԱ» ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն այցելել է Սպորտի կառավարման կենտրոնի ենթակայությամբ գործող «Միկա» մարզահամալիր:

Սպորտի կառավարման կենտրոնի տնօրեն Խորեն Զարգարյանի ուղեկցությամբ Ժաննա Անդրեասյանը շրջել է համալիրի մարզական եւ ադմինիստրատիվ ենթակառուցվածքներով, ծանոթացել է պայմաններին, կենտրոնի կողմից իրականացված վերանորոգման աշխատանքներին, արձանագրել առկա խնդիրները եւ անդրադարձել հետագա շահագործման հարցերին:

ԿԳՄՍ նախարարը եղել է նաեւ ֆուտբոլի խաղադաշտում, կարատեի եւ ըմբշամարտի դահլիճներում, ինչպես նաեւ ֆուտզալի մարզադահլիճում, որտեղ նաեւ բասկետբոլի մարզումներ են անցկացվում:

Արձանագրվել է, մասնավորապես, համալիրի տանիքի եւ կաթսայատան վերանորոգման, ջրահեռացման համակարգի արդիականացման, ինչպես նաեւ ադմինիստրատիվ շենքի վերակառուցման անհրաժեշտությունը:

ԿԳՄՍ նախարարը «Միկա» մարզահամալիրի ենթակառուցվածքների բարելավումը կարեւորել է նաեւ մարզական խոշոր միջազգային մրցաշարերի անցկացման համատեքստում: Մասնավորապես, 2025 թվականին Հայաստանում մարզական 4 խոշոր միջոցառում է անցկացվելու, որոնցից 3-ը՝ խաղային մարզաձեւերից:

Խորեն Զարգարյանը տեղեկացրել է՝ «Միկա» մարզահամալիրում ներկայում 1200 երեխա է մարզվում տարբեր մարզաձեւերով՝ ֆուտբոլ, ըմբշամարտ, կարատե եւ այլն:

ՀԱՄԵՐԳ ԵՎ ՏՈՆԱՎԱՃԱՌ՝ ՋԵՐՄՈՒԿՈՒՄ

Ջերմուկ քաղաքում դեկտեմբերի 26-ին եւ 27-ին կանցկացվի Ամանորյա բացօթյա համերգ, հեղինակային երգի մրցույթ-Փառատոնի մրցանակների հանձնման արարողություն եւ Սուրբ Ծննդյան տոնավաճառ: «Ջերմ Ամանոր Ջերմուկում» խորագրով միջոցառումը տեղի կունենա քաղաքի Ըմպելասրահի հարեւանությամբ:

Դեկտեմբերի 26-ին գլխավոր բեմում ելույթներով հանդես կգան Christmas Jazz Trio-ն, Ցայգ բենդը, Տիեզերք բենդը, DJ, իսկ դեկտեմբերի 27-ին Jazz for Kids նախագիծը, հեղինակային երգի մրցույթ-Փառատոնի եզրափակիչ համերգ եւ մրցանակաբաշխություն, «Ռեինկարնացիա» նվագախումբը, DJ Guevo-ն:

Երկու օրերին կկազմակերպվի Սուրբ Ծննդյան տոնավաճառ տեղի արվեստագետների աշխատանքներով եւ արտադրանքով: Կներկայացվեն արվեստագետների ձեռագործ աշխատանքներ (հուշանվերներ, զարդեր, տոնական դեկորներ), տեղական արտադրանք (չրերի եւ անուշեղենի տեսականի), տաք խմիչքների եւ ուտեստների տաղավարներ:

Նախագիծն իրականացվում է ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԱՀԱՑԵԼ Է 1966 Թ. ԱՇԽԱՐՀԻ ՉԵՄՊԻՈՆ ԴԱՐՁԱԾ ՔՈՐՋ ԻՍԹՀԵՄԸ

88 տարեկանում մահացել է Անգլիայի հավաքականի կազմում 1966 թվականի ֆուտբոլի աշխարհի առաջնության հաղթող Ջորջ Իսթհեմը: Այդ մասին հայտնում է անգլիական «Սթոք Սիթիի» մամուլի ծառայությունը:

«Այս դժվարին պահին մեր մտքերը Ջորջի ընտանիքի եւ ընկերների հետ են», - ասվում է հաղորդագրության մեջ:

Այդ չեմպիոնական կազմից ողջ են մնացել երեք հոգի՝ Իան Քալագանը, Թերի Փեյնը եւ Ջեֆ Հերստը:

«Սթոք Սիթիում» կիսապաշտպանը խաղացել է 1966-1973 թվականներին, նվաճել լիգայի գավաթը (1972): Նա հանդես է եկել նաեւ «Նյուքասլում» եւ «Արսենալում»: Անգլիայի հավաքականում Իսթհեմն անցկացրել է 19 հանդիպում եւ դարձել 2 գոլի հեղինակ: Կարիերան ավարտելուց հետո՝ Իսթհեմը մարզիչ է աշխատել ՀԱՀ-ում, բացի այդ, 1977-1978 թվականներին գլխավորել է «Սթոք Սիթին»:

ԱԴԵԼՅԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԱՆԸՆԴՄԵՋ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՉԵՄՊԻՈՆ

Գեղասահորդուհի Ադելյա Պետրոսյանը երկրորդ տարին անընդմեջ նվաճեց կանանց մենասահքի Ռուսաստանի չեմպիոնի տիտղոս:

Օմսկում անցկացվող առաջնությունում էթերի Տուտբերիձեի սանը կարճ եւ ազատ ծրագրերի արդյունքում հավաքեց 262,92 միավոր: Անցած տարի Ադելյա Պետրոսյանը հաղթել էր 246,53 միավորով:

Արծաթե մեդալը նվաճեց Դարյա Սադկովան՝ 234,69 միավոր: Լավագույն եռյակը եզրափակեց Ալինա Գորբաչովան՝ 223,92:

ՀԱԿԱՌԵԿՈՐԴՆԵՐ

«Մանչեսթեր Սիթիի» գլխավոր մարզիչ Պեպ Գվարդիոլան Անգլիայի Պրեմիեր լիգայի 17-րդ տուրի շրջանակում «Աստոն Վիլայի» հետ խաղում կրած պարտությունից հետո (1:2) խոսել է թիմի անհաջող արդյունքների մասին:

«Մենք գերազանցեցինք բոլոր ռեկորդները: Հիմա մենք սկսում ենք այլ ռեկորդներ սահմանել, մյուս կողմից՝ հակառեկորդներ: Ցավոք սրտի, դա ճիշտ է-»,- ասել է Գվարդիոլան հետխաղյա մամուլի ասուլիսի ժամանակ:

Հիշեցնենք, որ 17 տուրերի արդյունքներով «Մանչեսթեր Սիթին» զբաղեցնում է Պրեմիեր լիգայի մրցաշարային աղյուսակի յոթերորդ հորիզոնականը: Հաջորդ հանդիպումը «Սիթին» կանցկացնի ԱՊԼ-ի 18-րդ տուրի՝ «Էվերթոնի» հետ դեկտեմբերի 26-ին: Լիգայի առաջատարը «Լիվերպուլն» է:

● *Դեկտեմբերի 26-ին՝ ժամը 15:00-ին, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում կցուցադրվի «Ալիսան հայելիների աշխարհում» ներկայացումը: Տոմսերը՝ 1.000-3.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ որդեգրման պետական գրանցման համար, եւ որքան է կազմում պետական տուրքի դրույքաչափը: Խնդրում եմ նաեւ տեղեկացնել, թե ինչ ժամկետում է կատարվում որդեգրման պետական գրանցումը:

Մարինե Ամրոյան (41 տարեկան, տնային տնտեսուհի)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ որդեգրման գրանցման համար պահանջվում է ներկայացնել՝

1) որդեգրողի (որդեգրողների) անձը հաստատող փաստաթղթերը (պատճենները),

2) դատարանի՝ որդեգրման մասին օրինական ուժի մեջ մտած վճիռը,

3) երեխայի ծննդյան ակտային գրանցման տեղեկանքը կամ ծննդի պետական վկայականը,

4) դիմողի անձը հաստատող փաստաթուղթը, եթե դիմումը ներկայացվում է լիազորված անձի միջոցով:

Միաժամանակ հայտնում ենք, որ որդեգրման պետական գրանցումը կատարվում է դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու նույն աշխատանքային օրը: Օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց կողմից որդեգրման պետական գրանցման՝ ներառյալ վկայական տալու համար պետական տուրք չի գանձվում:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ որդեգրման պետական գրանցման համար հիմք է դատարանի՝ որդեգրման մասին օրինական ուժի մեջ մտած վճիռը: Որդեգրման պետական գրանցման համար դիմումը կարող է ներկայացվել որդեգրողի (որդեգրողների) կամ նրա լիազորած անձի միջոցով: Որդեգրման պետական գրանցումը կատարում է ԱՆ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունը: Դիմումները գործակալություն են ներկայացվում էլեկտրոնային եղանակով կամ սպասարկման կենտրոնների միջոցով:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Անչափահասին կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձին կենսաթոշակ նշանակելու համար ո՞վ պետք է դիմի կենսաթոշակ նշանակող մարմին:

Ջենյա Օհանյան (52 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ մինչեւ 14 տարեկան անչափահաս անձին կենսաթոշակ նշանակելու համար նրա հաշվառման վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում գրավոր դիմում է ներկայացնում ծնողը (որդեգրողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն):

Եթե անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձի օրինական ներկայացուցիչը համապատասխան կազմակերպությունն է (մանկատունը կամ հոգեբուժարանը), որտեղ գտնվում է անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձը, նրան կենսաթոշակ նշանակելու համար գրավոր դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կազմակերպության գտնվելու վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում է ներկայացնում այդ կազմակերպության ղեկավարը կամ նրա լիազորած անձը: 14 տարեկան անձն իրավունք ունի կենսաթոշակ նշանակելու համար դիմել անձամբ:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակ նշանակելու համար բնակության վայրի մասին տեղեկանք չի պահանջվում, բավարար են անձնագրում քաղաքացու անձնական տվյալների եւ նրա հաշվառման վայրի մասին նշում պարունակող էջերի պատճենները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Մրցաշրջան 2024-ում Հայաստանի բռնցքամարտիկները աշխարհի ու Եվրոպայի առաջնություններում, Եվրասիայի գավաթում եւ Ասիական 8-րդ խաղերում նվաճել են 45 մեդալ, որից 8 ոսկե, 15 արծաթե եւ 2 բրոնզե:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-5 - 9 -1 + 2
Կոտայքի լեռներ	-6 - 8 -1 +1
Կոտայքի նախալեռներ	-3 - 5 +3 + 5
Գեղարքունիք	-7 - 11 - 2 + 1
Լոռի	- 4 - 8 +1 + 4
Տավուշ	0 - 4 +3 + 6
Արագածոտնի լեռներ	- 6 - 9 0 - 2
Արագածոտնի նախալեռներ	-1 - 4 + 4 + 7

Արարատ	0 - 4 +6 + 8
Արմավիր	-1 - 5 + 5 + 7
Վայոց ձորի լեռներ	-6 - 10 0 - 2
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +12 + 14
Սյունիքի հովիտներ	0 + 3 + 8 + 10
Սյունիքի նախալեռներ	- 4 - 8 - 1 + 4
ԼՂՀ	- 3 - 7 0 + 6
Երեւան	0 - 2 + 2 + 4

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **23.12.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*